ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԾՁԲ-20-10/16-1

ք. Երևան 24.06.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գազշին ՄՁ» ՍՊԸ ն, ի դեմս տնօրեն Հ. Ասատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***փորձաքննության ծառայություններ (գազային սարքերի, սարքավորումների վերանորոգման, կարգաբերման, ստուգաչափման և սպասարկման ծառայություններ)*** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր

տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 10,000,000 (տաս միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ այն ստորագրվելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում, պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած միավոր գների հանրագումարային գինն է, որը կազմում է **23,849,760** (քսաներեք միլիոն ութ հարյուր քառասունինը հազար յոթ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է, որը կազմում է **24,337,600** (քսանչորս միլիոն երեք հարյուր երեսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **12** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Գազշին ՄՁ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Արին Բերդի 5-րդ նրբ. թիվ 12.
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011144079	Հ/Հ 2480101509490000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02229549
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Հ. ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-20-10/16- 1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
(ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ)

Ծառայությունների								
Հ/հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Առավելագույն գինը (ՀՀ դրամ)	Մատուցման		
						Սկիզբը	Ավարտը	Հասցեն
1	Փորձաքննության ծառայություններ (գազային սարքերի, սարքավորումների վերանորոգման, կարգաբերման, ստուգաչափման և սպասարկման ծառայություններ)	ՊՆ զորամասերի ճնշման կարգավորիչ կետերի գազային սարքերի, սարքավորումների վերանորոգում, կարգաբերում, ստուգաչափում և սպասարկում	դրամ	1	10,000,000	III-IV եռամսյակներ, բայց ոչ ուշ քան 15.12.2020թ. ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության հայտերի հիման վրա	20.12.2020թ.	ՀՀ տարածք (ՊՆ զորամասեր)

Ծառայությունների			
Հ/հ	Առանձին տեսակների անվանումը	Չափման միավորը	Առանձին տեսակների միավոր ավելագույն (նախահաշվային) գինը (ՀՀ դրամ)
Գազի ճնշման կարգավորիչների վերանորոգում, կարգաբերում և ստուգաչափում			
1	Գազի ճնշման կարգավորիչ, GS-78-R2, 1" 0.5bar, 20մ³/ժ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	36,000
2	Գազի ճնշման կարգավորիչ, GS-78-R2, 2" 0.5bar, 80մ³/ժ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	67,500
3	Գազի ճնշման կարգավորիչ, GS-64-22, մուտք. 3/4", ելք.1" 6bar, 5մ³/ժ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	23,500
4	Գազի ճնշման կարգավորիչ, GS-64-22, մուտք. 3/4", ելք.1" 6bar, 10մ³/ժ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	28,000
5	Գազի ճնշման կարգավորիչ, GS-64-22, մուտք. 3/4", ելք.1" 6bar, 20մ³/ժ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	30,500
6	Գազի ճնշման կարգավորիչ, GS-74-27 GS-72 27, 1.1/2" 6 bar, 40մ³/ժ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	54,500
7	Գազի ճնշման կարգավորիչ, GS-74-27 GS-72 27, 1.1/2" 6bar, 70մ³/ժ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	63,500

8	Գազի ճնշման կարգավորիչ, GS-74-27 GS-72-27, 1.1/2" 6bar, 100մ³/ժ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	70,000
9	Գազի ճնշման կարգավորիչ, GS-74-27 GS-72-27, 1.1/2" 6bar, 160մ³/ժ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	81,500
10	Գազի ճնշման կարգավորիչ, GS-74-27 GS-72-27, 1.1/2" 6bar, 250 մ³/ժ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	87,000
11	Գազի ճնշման կարգավորիչ, GS-74-27H 6bar, 500մ³/ժ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	105,000
12	Գազի ճնշման կարգավորիչ, GS-74-27H 6bar, 1000մ³/ժ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	126,000
13	Գազի ճնշման կարգավորիչ, GS-74-27H U2000 6bar, 2000 մ³/ժ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	135,000
14	Գազի ճնշման կարգավորիչի /ГРУ/ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	85,000
15	Գազի ապահովիչ կափույրի /ГРУ/ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	45,000
16	Գազի զտիչի /ГРУ/ մաքրում և վերանորոգում	լր	20,000
17	Ճնշման կարգավորիչի հրահանգիչի /ГРУ/ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	15,000
18	Սողնակային փականի վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	10,000
19	Գազի խցանային փականի վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	3,500
20	Իմպուլսային գծերի փչամաքրում	հատ	1,500
21	G2.5, G4, G6 տիպի գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	հատ	26,000
22	G10 G16 Elcor-M և Elcor-MU տիպի արդյունաբերական գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	հատ	47,500
23	G25B Elcor-M և Elcor-MU տիպի արդյունաբերական գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	հատ	53,500
24	G 25A Elcor-M և Elcor-MU տիպի արդյունաբերական գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	71,000
25	G 40 տիպի Elcor-M և Elcor-MU արդյունաբերական գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	70,500
26	G 65 Elcor-M և Elcor-MU տիպի արդյունաբերական գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	84,500
27	G 100« G160 Elcor-M և Elcor-MU տիպի արդյունաբերական գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	93,500
28	Elcor-M/MU էլեկտրոնային ճշտիչի վերանորոգում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	89,000
29	Մեմբրանային Գազի հաշվիչ G 2,5 AG-79.2.5 3/4" արտաքին պտուտակ.ներքին պտուտակ 0.2 bar 4մ³/ժ	լր	25,000
30	Մեմբրանային Գազի հաշվիչ G 4 GD-A-04 3/4" արտաքին պտուտակ, ներքին պտուտակ 0.5 bar 6 մ³/ժ	լր	27,500
31	Մեմբրանային Գազի հաշվիչ G 6 GD-A-06 1" արտաքին պտուտակ 0.5 bar 10 մ³/ժ	լր	38,000
32	Մեմբրանային գազի հաշվիչ էլեկտրոնային ճշտիչով G 10 ELCOR-M GD-A-010 1 1/2" արտաքին պտուտակ 0.5bar 16 մ³/ժ	լր	454,500
33	Մեմբրանային գազի հաշվիչ G 10 GD-A-010 1 1/2" արտաքին պտուտակ 0.5 bar 16 մ³/ժ	լր	134,500
34	Մեմբրանային Գազի հաշվիչ էլեկտրոնային ճշտիչով G 16 ELCOR-M GD-A-016 1 1/2" արտաքին պտուտակ 0.5 bar 25 մ³/ժ	լր	471,500
35	Մեմբրանային գազի հաշվիչ G 16 GD-A-016 1 1/2" արտաքին պտուտակ 0.5 bar 25 մ³/ժ	լր	151,500
36	Մեմբրանային գազի հաշվիչ էլեկտրոնային ճշտիչով G 25 B ELCOR-M GD-A-025 2" արտաքին պտուտակ 0.5 bar 40 մ³/ժ	լր	598,000
37	Մեմբրանային գազի հաշվիչ G 25 GD-A-025 2" արտաքին պտուտակ 0.5 bar 40 մ³/ժ	լր	218,000

38	Մեմբրանային գազի հաշվիչ էլեկտրոնային ճշտիչով G 25A ELCOR-M GD-A-025 2" կցաշուրթ 1bar40 մ³/ժ	լր	650,000
39	Մեմբրանային գազի հաշվիչ G25A GD-A-025 2" կցաշուրթ 1bar 40մ³/ժ	լր	270,000
40	Մեմբրանային գազի հաշվիչ էլեկտրոնային ճշտիչով G 40 ELCOR-M GD-A-040 3" կցաշուրթ 1bar 65 մ³/ժ	լր	858,000
41	Մեմբրանային գազի հաշվիչ G 40 GD-A-040 3" կցաշուրթ 1bar 65 մ³/ժ	լր	478,000
42	Մեմբրանային գազի հաշվիչ էլեկտրոնային ճշտիչով G 65 ELCOR-M GD-A-065 3" կցաշուրթ 1bar100 մ³/ժ	լր	945,000
43	Մեմբրանային գազի հաշվիչ G 65 GD-A-065 3" կցաշուրթ 1bar 100մ³/ժ	լր	565,000
44	Մեմբրանային գազի հաշվիչ էլեկտրոնային ճշտիչով G 100 ELCOR-M GD-A-100 4"կցաշուրթ 1bar160մ³/ժ	լր	1,022,000
45	Մեմբրանային գազի հաշվիչ G100 GD-A-100 4" կցաշուրթ 1bar 160մ³/ժ	լր	642,000
46	Մեմբրանային գազի հաշվիչ էլեկտրոնային ճշտիչով G 160 ELCOR-M GD-A-160 4"կցաշուրթ 1bar250մ³/ժ	լր	1,067,000
47	Մեմբրանային գազի հաշվիչ G160 GD-A-160 4" կցաշուրթ 1bar 250մ³/ժ	լր	687,000
48	Տուրբինային գազի հաշվիչ G 65 TZ DN 50 G 65 150 2" 19.3 bar 100 մ³/ժ	լր	813,000
49	Տուրբինային գազի հաշվիչ G 100 TZ DN 80 G100 150 3" 19.3 bar 160 մ³/ժ	լր	951,000
50	Տուրբինային գազի հաշվիչ G 160 TZ DN 80 G160 150 3" 19.3 bar 250 մ³/ժ	լր	971,000
51	Տուրբինային գազի հաշվիչ G 250 TZ 80 G 250 150 3" 19.3 bar 400 մ³/ժ	լր	992,000
52	Տուրբինային գազի հաշվիչ G 400 TZ 100 G 400 150 4" 19.3 bar 650 մ³/ժ	լր	1,361,000
53	Տուրբինային գազի հաշվիչ G 650 TZ 150 G650 150 6" 19.3 bar 1000 մ³/ժ	լր	2,121,500
54	Գազի ծավալային էլեկտրոնային ճշտիչ ITRON (Corus) PTZ	լր	750,000
55	Գազի ծավալային էլեկտրոնային ճշտիչ Elcorr	լր	480,000
56	Գազի ճնշման կարգավորիչ RG/2M RG04 020 1" 0.5 bar 40 մ³/ժ	լր	29,500
57	Գազի ճնշման կարգավորիչ RG/2M RG06 040 1.1/2" 0.5 bar 150 մ³/ժ	լր	89,000
58	Գազի ճնշման կարգավորիչ RG/2M RG07 040 2" 0.5 bar 200 մ³/ժ	լր	121,000
59	Գազի ճնշման կարգավորիչ EGC-GR մուտք. 3/4"-ելք. 1" 6 bar 5 մ³/ժ	լր	35,500
60	Գազի ճնշման կարգավորիչ EGC-GR մուտք. 3/4"-ելք. 1" 6 bar 10 մ³/ժ	լր	39,500
61	Գազի ճնշման կարգավորիչ EGC-GR մուտք. 3/4"-ելք. 1" 6 bar 20 մ³/ժ	լր	43,500
62	Գազի ճնշման կարգավորիչ EGC-GR 1.1/2" 6 bar 40 մ³/ժ	լր	116,500
63	Գազի ճնշման կարգավորիչ EGC-GR 1.1/2" 6 bar 65 մ³/ժ	լր	125,000
64	Գազի ճնշման կարգավորիչ EGC-GR 1.1/2" 6 bar 100 մ³/ժ	լր	133,500
65	Գազի ճնշման կարգավորիչ EGC-GR 1.1/2" 6 bar 160 մ³/ժ	լր	152,500
66	Գազի ճնշման կարգավորիչ EGC-GR 1.1/2" 6 bar 250 մ³/ժ	լր	185,500
67	Գազի ճնշման կարգավորիչ EGC-GR (20kPa) 1.1/2" 6 bar 40 մ³/ժ	լր	144,500
68	Գազի ճնշման կարգավորիչ EGC-GR (20kPa) 1.1/2" 6 bar 65 մ³/ժ	լր	153,000
69	Գազի ճնշման կարգավորիչ EGC-GR (20kPa) 1.1/2" 6 bar100 մ³/ժ	լր	161,500
70	Գազի ճնշման կարգավորիչ EGC-GR (20kPa) 1.1/2" 6 bar160 մ³/ժ	լր	180,500
71	Գազի ճնշման կարգավորիչ EGC-GR (20kPa) 1.1/2" 6 bar 250 մ³/ժ	լր	213,500
72	Գազի ճնշման կարգավորիչ РДБК 1-50/35 2"(կցաշուրթ) 6bar1400 մ³/ժ	լր	380,000
73	Պահպանիչ կափույր մեկուսիչ կցորդով GS-77-37 3/4" 12 bar	լր	8,500
74	Պահպանիչ կափույր մեկուսիչ կցորդով GS-77-37 1" 12 bar	լր	14,000
75	Գազի Գնդիկավոր փական Gas Valve 1/2 " 24bar	հատ	2,000
76	Գազի Գնդիկավոր փական Gas Valve 3/4 " 24bar	հատ	3,000
77	Գազի Գնդիկավոր փական Gas Valve 1" 24 bar	հատ	4,000
78	Գազի Գնդիկավոր փական Gas Valve 1 1/4 " 24 bar	հատ	6,500
79	Գազի Գնդիկավոր փական Gas Valve 1 1/2 " 24 bar	հատ	9,500

80	Գազի Գնդիկավոր փական Gas Valve 2" 24 bar	հատ	13,000
81	Սողնակային փական ДУ 50 30ч 76к 6 bar 2" կցաշուրթ	հատ	27,500
82	Սողնակային փական ДУ 80 30ч 76к 6 bar 3" կցաշուրթ	հատ	42,500
83	Սողնակային փական ДУ 100 30ч 76к 6 bar 4" կցաշուրթ	հատ	53,500
84	Սողնակային փական ДУ 150 30ч 76к 6 bar 6" կցաշուրթ	հատ	97,000
85	Բնական գազի Ֆիլտր FZBS-Տպ-50 150 2" կցաշուրթ 12bar	հատ	148,500
86	Բնական գազի Ֆիլտր FZB-Տպ-50 150 2" կցաշուրթ 12bar	հատ	191,000
87	Բնական գազի Ֆիլտր FZBS-Տպ-80 150 3" կցաշուրթ 12bar	հատ	244,000
88	Բնական գազի Ֆիլտր FZBS-Տպ-100 150 4" կցաշուրթ 12bar	հատ	339,000
89	Բնական գազի Ֆիլտր FFZ 1F-Տպ-40 2" կցաշուրթ 6bar	հատ	20,000
90	Բնական գազի Ֆիլտր FFZ -Տպ-50 2" կցաշուրթ 6bar	հատ	33,500
91	Բնական գազի Ֆիլտր FFZ -Տպ-80 3" կցաշուրթ 6bar	հատ	46,500
92	Բնական գազի Ֆիլտր FFZ -Տպ-100 4" կցաշուրթ 6bar	հատ	67,000
93	Բնական գազի Ֆիլտր FZ-2N -Տպ-20 3/4" պտուտակային 6bar	հատ	6,500
94	Բնական գազի Ֆիլտր FZ-2N -Տպ-40 1.1/2" պտուտակային 6bar	հատ	12,000
95	Գազի Ֆիլտր բաժակ FZ-2N -Տպ-20 3/4"	հատ	800
96	Գազի Ֆիլտր բաժակ FZ-2N -Տպ-40 1.1/2"	հատ	1,000
97	Գազի ազդանշանային համակարգ SECOR 2000 220V CHCO մեթան /CO	լր	49,000
98	Գազի ազդանշանային համակարգ 220V Ferrari CHCO մեթան /CO	լր	63,500
99	Գազի ազդանշանային համակարգ 220V Ferrari GS911K	լր	41,500
100	Գազի ազդանշանային համակարգի պահպանիչ փական 230V (նորմալ բաց) 1/2" 5kPa	հատ	20,000
101	Գազի ազդանշանային համակարգի պահպանիչ փական 230V (նորմալ բաց) 3/4" 5kPa	հատ	22,000
102	Գազի ազդանշանային համակարգի պահպանիչ փական 230V (նորմալ բաց) 1" 5kPa	հատ	34,000
103	Գազի ազդանշանային համակարգի պահպանիչ փական 230V (նորմալ բաց) 1.1/4" 5kPa	հատ	52,000
104	Գազի ազդանշանային համակարգի պահպանիչ փական 230V (նորմալ բաց) 1.1/2" 5kPa	հատ	54,000
105	Գազի ազդանշանային համակարգի պահպանիչ փական 230V (նորմալ բաց) 2" 5kPa	հատ	76,000
106	Գազի ազդանշանային համակարգի պահպանիչ փական 230V (նորմալ բաց) 3" 5kPa	հատ	315,000
107	Գազի ազդանշանային համակարգի պահպանիչ փական 230V (նորմալ բաց) 4" 5kPa	հատ	423,000
108	Կցաշուրթ DN-40 1.1/2" 10 bar	զույգ	3,400
109	Կցաշուրթ DN-50 2" 10 bar	զույգ	3,700
110	Կցաշուրթ DN-80 3" 10 bar	զույգ	5,500
111	Կցաշուրթ DN-100 4" 10 bar	զույգ	7,300
112	Կցաշուրթ DN-150 6" 10 bar	զույգ	11,500
113	Կցաշուրթ DN-200 8" 10 bar	զույգ	14,500
114	Կցաշուրթ DN-80 3" 12 bar	զույգ	7,000
115	Կցաշուրթ DN-100 4" 12 bar	զույգ	9,000
116	Կցաշուրթ DN-50 2" 40 bar	զույգ	9,000
117	Կցաշուրթ DN-80 3" 40 bar	զույգ	14,500
118	Ներդիր պարանիտե DN-50 2"	զույգ	500
119	Ներդիր պարանիտե DN-80 3"	զույգ	600
120	Ներդիր պարանիտե DN-100 4"	զույգ	800
121	Ներդիր պարանիտե DN-150 6"	զույգ	1,000

122	Խծուծ	կգ	10,000
123	Քսայուղ	կգ	4,500
124	Պարանիտ	կգ	5,000
125	Ներկ	կգ	2,500
126	Մոնոմետր 4 մթն	հատ	5,000
127	Մանոմետր U-աձև GS (Պիզոմետր)	հատ	12,000
Ընդամենը			**24,337,600**

Ծանոթություն.

1. Ծառայությունների մատուցման առավելագույն գումարը կազմում է 10,000,000 ՀՀ դրամ:
2. Ծառայություններն իրականացվելու են ՊՆ զորամասերում՝ համաձայն հաստատված օրացուցային գրաֆիկի:
3. Վճարումն իրականացվում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետով սահմանված բանաձևի համաձայն:
4. Ծառայությունների բացակայության դեպքում դրանց արժեքը հաշվարկվում է ՀՀ կառավարության 23.06.2011թ. N 879-Ն որոշմամբ հաստատված կարգով՝ կիրառելով 2019թ.-ի թիվ 08 տեղեկագրի վերահաշվարկի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետով սահմանված բանաձևով ստացված գործակիցը:
5. Նյութերի, պատրաստվածքների և սարքավորումների գները փոխհատուցվում են ըստ 2019թ.-ի թիվ 08 ինֆորմացիոն տեղեկագրի և/կամ/ 04.10.2016թ. ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ՝ «Հաշվարկային փաստաթուղթը և դրա կազմումը» հոդվածի 2-րդ մասով նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերով՝ ըստ ՀՀ կառավարության 23.06.2011թ. N 879-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետով սահմանված բանաձևով ստացված գործակիցը:
6. Նյութերը, պատրաստվածքներն ու սարքավորումները ձեռք են բերվում Կատարողի կողմից՝ բացառապես վերանորոգման և սպասարկման աշխատանքներում օգտագործելու համար՝ ըստ շինարարական նորմերի չափորոշիչների:
7. Նյութերի, պատրաստվածքների, սարքավորումների վրա պետք է կիրառել տրանսպորտային (նյութերի տեղափոխման) ծախսերի մարզային գործակիցները՝ ըստ ՀՀ կառավարության 23.06.2011թ. N 879-Ն որոշմամբ հաստատված կարգի:
8. Սույն ծառայությունների համար նախագծային փաստաթղթեր չեն պահանջվում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Գազշին ՄՁ» ՍՊԸ տնօրեն

Հ. ԱՍԱՏՐՅԱՆ

ա.հ. AM 0858368

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-20-10/16-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
Չ/Հ	CPV կոդը	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ
1	50531140/2	փորձաքննության ծառայություններ (գազային սարքերի, սարքավորումների վերանորոգման, կարգաբերման, ստուգաչափման և սպասարկման ծառայություններ)	5,000,000	5,000,000	5,000,000	10,000,000	10,000,000	10,000,000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՑՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Գազշին ՄՁ» ՍՊԸ տնօրեն

Հ. ԱՍԱՏՐՅԱՆ

Ծ. ա Ողջույն Միրզոյան
անձ. AM 0858368

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-20-10/16- 1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն. անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԾՁԲ-20-10/16-1 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն